Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
հուլիսի 16 -ի N 960 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2016 թվականի N 1104-Ա

ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասի՝

1. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ) Հայաստանի Հանրապետության միանալու և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ստանդարտի ներդրման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել բազմաշահառու խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) բազմաշահառու խմբում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնող այլընտրանքային անդամը սույն որոշման հավելվածի 1-6-րդ կետերով սահմանված անդամի բացակայության դեպքում փոխարինում է նրան՝ քվեարկելու իրավունքով.

2) բազմաշահառու խմբում արդյունահանող կազմակերպությունները ներկայացնող այլընտրանքային անդամը սույն որոշման հավելվածի 8-11-րդ կետերով սահմանված անդամի բացակայության դեպքում փոխարինում է նրան՝ քվեարկելու իրավունքով.

3) բազմաշահառու խմբում քաղաքացիական հասարակությունը ներկայացնող այլընտրանքային անդամը սույն որոշման հավելվածի 16-19-րդ կետերով սահմանված անդամի բացակայության դեպքում փոխարինում է նրան՝ քվեարկելու իրավունքով:

Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
նոյեմբերի 24-ի N 1104-Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ
ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ

1. Ա. Միրզոյան	-	ՀՀ առաջին փոխվարչապետ (խմբի նախագահ)
2. Դ. Անանյան	-	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ
3. Ի. Ղափլանյան	-	ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
4. Վ. Գևորգյան	-	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
5. Կ. Իսախանյան	-	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
6. Ս. Քրմոյան	-	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
7. Ա. Պողոսյան	-	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
8. Պ. Խաչատրյան	-	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության իրավաբանական դեպարտամենտի ղեկավար (համաձայնությամբ)
9. Վ. Վարդանյան	-	«Գեոմայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
10. Ա. Ստեփանյան	-	«Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կայուն զարգացման գծով փոխնախագահ (համաձայնությամբ)
11. Ա. Նիկողոսյան	-	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության վարչական տնօրեն (համաձայնությամբ)
12. Դ. Թադևոսյան	-	«Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

(համաձայնությամբ)

13. Ա. Օսիկյան - «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ) (համաձայնությամբ)

14. Ա. Աղաբալյան - «Գեոէկոնոմիկա» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ) (համաձայնությամբ)

15. Մ. Եղիազարյան - «Մեղրաձոր գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր հաշվապահ (այլընտրանքային անդամ) (համաձայնությամբ)

16. Ս. Այվազյան - «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն (համաձայնությամբ)

17. Ի. Զարաֆյան - «Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

18. Հ. Մովսիսյան - Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

19. Ա. Համբարձումյան - «Հասարակական ձայն» հասարակական կազմակերպության խորհրդի անդամ (համաձայնությամբ)»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ